



# ՖՐԱՆՈՒԿՅԱՆ ԱԿՆԱՐԿՆԵՐ No 8

10.11.2018



## Նոր ուսումնական տարվա մեկնարկ 2018-2019

Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոնի 2-րդ և 3-րդ կուրսի ուսանողները, դասախոսական և վարչական ողջ անձնակազմն ընդունեցին առաջին կուրսեցիներին ավանդույթ դարձած երգերաժշտության ներքո:



## Ուսուցչի տոն

Ուսուցչի տոնը շնորհավորելու համար ուսանողներն ընտրել էին ամենաանկեղծ տարբերակը՝ իրենց մեջ եղած բազմապիսի շնորհները դրսևորելով: Հայկական, եվրոպական պարեր, ֆլեյտա, դերասանական փոքրիկ ներկայացում, հանպատրաստից շնորհավորանքներ, ուսանողների կողմից պատրաստված դեկորատիվ ծաղիկներ...

Եվ այս ամենը մեծ սրտով... Անակնկալ էր այդ օրերին Հայաստանում գտնվող «Ռոն-Հայաստան-Փոխանակումներ-Վերապատրաստումներ» ասոցիացիայի անդամների կողմից Շառլ Ազնավուրի երգացանկից կատարումները...

Կենտրոնի հոգաբարձուների խորհրդի նախագահ Լյուկա Մանզանարեան և տնօրեն Գ. Գրիգորյանը, դասախոսական անձնակազմը իրենց վերաբերմունքն արտահայտեցին միայն մեկ բառով՝ շնորհակալություն...



## Հարգանքի տուրք՝ նվիրված Շառլ Ազնավուրի հիշատակին



Հայաստանում Ֆրանսիայի արտակարգ և լիազոր դեսպան Ջոնաթան Լաբրուի գլխավորությամբ կենտրոնի ուսանողները, դասախոսական անձնակազմն ու Ռոն-Հայաստան-Փոխանակումներ կազմակերպության անդամները, ինչպես նաև Հայաստանում ֆրանսիական համալսարանի, Անտոլ Ֆրանսի անվան ֆրանսիական դպրոցի, Հայաստանի Ալիանս Ֆրանսեզի ներկայացուցիչները մասնակցեցին Մեծն Շառլ Ազնավուրի հիշատակին նվիրված քայլերին:



## ՖՐԱՆԿՈՖՈՆԻԱՅԻ ԳԱԳԱԹՆԱԺՈՂՈՎ

### Ֆրանկոֆոնիայի ավանում

Յայաստանում Ֆրանկոֆոնիայի 17-րդ գագաթնաժողովի շրջանակներում կազմակերպված Ֆրանկոֆոնիայի ավանում կենտրոնը ներգրավված էր «Ֆրանսիայի տաղավար»-ի կազմում:

«Վարսավիրական գործ» մասնագիտության ուսանողները մեծ հետաքրքրություն էին առաջացրել այցելուների շրջանում անցկացնելով վարպետաց դասեր:



Իսկ «խոհարարական գործ» մասնագիտության ուսանողները՝ ներառյալ Նախկին շրջանավարտները, հյուրասիրում էին ֆրանսիական տիպիկ կերակրատեսակներ: Ութ ուսանող մասնակցեց տաղավարում իրականացված խոհարարական մրցույթին: Եզրափակիչ փուլ անցած չորս մասնակիցներից մեկը՝ կենտրոնի Նախկին շրջանավարտ Օֆելյա Մարտիրոսյանը, ճանաչ-



վեց հաղթող, որին ժյուրին շնորհեց «Գագաթնաժողովի շեֆ խոհարար» կոչումը:

Միջոցառմանը մասնակցած մյուս ուսանողները ստացան մասնակցության վկայականներ և բազմաթիվ այլ նվերներ Յայաստանում Ֆրանսիայի դեսպանատան կողմից:



### Նորարարական ծրագրի մեկնարկ

Նոր համագործակցություն «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի և ՖՐԱՆՈՒԿ-ի միջև շարունակական կրթության միջոցով...

Դասընթացի նպատակն է խթանել մասնագետ-տեսուչների և խողովակագործների մասնագիտական հմտությունների կատարելագործմանը:

Դասընթացի արդյունավետ իրականացման նպատակով հաստատությունը համագործակցում է Ֆրանսիայի Լիոն քաղաքի «Ռեն-Ռոն-Մեդիտերանե» կամպուսի հետ, որը մշտապես մեթոդական աջակցություն է ցուցաբերում կենտրոնին:

Դասընթացի ավարտին շահառուներին տրվելու են վկայականներ:

### «Վեոլիա Գրուպ» ընկերության պատվիրակության ընդունելություն

Վերապատրաստման դասընթացների կապակցությամբ կենտրոնը պատիվ ունեցավ հյուրընկալելու ֆրանսիական «Վեոլիա Գրուպ» ընկերության Մարդկային ռեսուրսների կառավարման տնօրեն Ժան-Մարի Լամբերին, Նույն կազմակերպության Կենտրոնական և Արևելյան գոտու գործադիր փոխտնօրեն, «Վեոլիա Ջուր» ՓԲԸ Նախագահ Մալիկա Գենդուրիին, ընկերության գլխավոր տնօրեն Կրիստիան Լըֆեին, ընկերության գլխավոր գործառնական տնօրեն Գոռ Գրիգորյանին:



## Նոր լսարանների բացում



Ֆրանկոֆոնիայի գազաթնաժողովի նախօրեին «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի հետ համագործակցության շրջանակներում դասընթացների կազմակերպման համար նախատեսված նոր լսարանների բացմանը ներկա էին կենտրոնի հոգաբարձուների խորհրդի նախագահ պրն. Լյուկա Մանգանարեսը, «Վեոլիա Գրուպ» ընկերության պատվիրակության անդամները, որոնք բացման հանդիսավոր արարողությունից հետո ներկա գտնվեցին նաև կենտրոնում կազմակերպված «Հայկական խոհանոցի առանձնահատկությունները» խորագրով միջոցառմանը:

Պատվիրակության անդամները շնորհավորեցին միմյանց այս համագործակցության առիթով՝ նշելով, որ այսպիսով կրթական նոր մշակույթ է ներմուծվում Հայաստան՝ աշխատաշուկայի պահանջներին համապատասխան մրցունակ կադրեր պատրաստելու նպատակով:

## Սպանոյի աստվածը

Հայաստանում Ֆրանկոֆոնիայի 17-րդ գազաթնաժողովի շրջանակներում կազմակերպված միջոցառումներից առանձնանում էր նաև Երևանի Տիկնիկային թատրոնում ֆրանսերեն լեզվով բեմադրված Յասմինա Րեզայի «Սպանոյի աստվածը» ներկայացումը, որին ներկա գտնվեցին Դերձակ 3-2 կուրսի ուսանողները ֆրանսերենի դասախոս Լ. Աչոյանի ուղեկցությամբ:



Այն լավ առիթ էր ուսանողների համար՝ հանդիպելու ֆրանսիացի դերասանների հետ, զարգացնելու բանավոր հմտությունները, ինչպես նաև հաղորդակից լինելու մշակութային արժեքներին:



## Անձի զարգացման հմտություններ



Եվրոպական միության ֆինանսավորմամբ «ԵՄ-ն հանուն երիտասարդության՝ հմտություններ ապագայի համար» տարածաշրջանային ծրագրի շրջանակներում «Սեյվ դը չիլդրեն ինթերնեշլ» կազմակերպության հայաստանյան ներկայացուցչությունը և «ՕքսեՋեն» հիմնադրամն իրականացրին «Անձի զարգացման համընդհանուր հմտություններ» դասընթացաշարը: Ծրագրի թեմաները ներառում էին կարիերայի զարգացում, թիմային աշխատանք, հաղորդակցման, կազմակերպչական ու այլ հմտությունների զարգացում, ստեղծագործական մտքի, նախաձեռնողականության ու այլ անձնային որակների զարգացում և այլն: Կենտրոնից այս դասընթացին մասնակցեց «Կարիերայի կենտրոնի»-ի պատասխանատու, հայոց լեզվի դասախոս Անուշ Ստեփանյանը՝ նոր հմտություններ ձեռք բերելու, ուսանողադասախոսական կազմի հետ առավել ճկուն աշխատելու և արդյունավետ թիմ ձևավորելու համար: